



ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



**«ՋԻՂՐՈՑԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ**



2024

ԿԱՆՆԻԱՏԵՍՈՒՄ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՏԵՐԻ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ
ՎԱՐԱՐՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԻԵՐԻ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՏԱՎԱԶԱՆՆԵՐՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻՆ
ՍՊԱՍՎՈՂ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՎԱՐԱՐՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ ՁԵՎԱՎՈՐՈՂ
ՀԻՂՐՈՑԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

Գարնանային վարարումները ՀՀ գետերի ջրային ռեժիմի հիմնական փուլերից է, որը ձևավորվում է ձնհալքային, անձրևային և ստորերկրյա ջրերից և այդ պատճառով ունի խառը սնում: Գարնանային վարարումների հոսքի ծավալը, առավելագույն ելքի մեծությունը, սկիզբը և ավարտը, ձևավորման ընթացքը պայմանավորված են մթնոլորտային տեղումների քանակով և բնույթով, ջերմային ռեժիմով, ձյան մեջ եղած ջրի պաշարով, ձյան կուտակման և հալքի ընթացքով, ռելիեֆի առանձնահատկություններով և այլն: Գարնանային վարարումների ընթացքում հանրապետության գետերով անցնում է տարեկան հոսքի ընդհանուր ծավալի 30-90%-ը, որի մեծությունը պայմանավորված է առանձին գետերի ջրհավաք ավազանների տեղական գործոնների ազդեցությամբ:

Գարնանային վարարումները գետերի մեծ մասում սկսվում են հիմնականում մարտի երրորդ - ապրիլի առաջին տասնօրյակներում: ՀՀ գետերում տարեկան առավելագույն ելքերը դիտվում են գարնանային վարարումների ընթացքում և հաճախ գետերի ափամերձ տարածքների, բնակավայրերի, գյուղատնտեսական հողահանդակների, ենթակառուցվածքների հեղեղման պատճառ դառնում:

Գետերում գարնանային վարարումների բնութագրերը պայմանավորվում են *Նախաձմեռային* (սեպտեմբեր-նոյեմբեր), *ձմեռային* (դեկտեմբեր-մարտ) *ամիսների* փաստացի և *վարարումների ժամանակաշրջանի* (ապրիլ-հունիս) կանխատեսվող հիդրոոդերևութաբանական պայմանների առանձնահատկություններով:


Հաջորդիվ ներկայացվում է 2024 թվականի գարնանային վարարումների հոսքը պայմանավորող հիդրոոդերևութաբանական պայմանների նկարագիրը:

Նախաձմեռային ժամանակաշրջանի հիդրոոդերևութաբանական պայմաններ.


- *սեպտեմբերին* ամսական տեղումների քանակը շրջանների մեծ մասում բարձր է եղել նորմայից. Շիրակի, Լոռու, Սյունիքի մարզերում և Երևանում կազմել է նորմայի՝ 130-170%-ը, Տավուշի, Կոտայքի, Գեղարքունիքի, Արարատի և Վայոց ձորի մարզերում՝ նորմայի 100-130%-ը, Արմավիրի մարզում՝ նորմայի 70%-ը, (նկ.1.ա)

- *հոկտեմբերին* ամսական տեղումների քանակը Լոռու և Տավուշի մարզերում ցածր է եղել նորմայից՝ կազմելով նորմայի 55-65%-ը, Արմավիրի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերում և Երևանում կազմել է նորմայի 100-140%-ը, իսկ մյուս շրջաններում կազմել է նորմայի 70-100%-ը (նկ.1.բ)
- *նոյեմբերին* հանրապետության շրջանների մեծ մասում ամսական տեղումների քանակը ցածր է եղել նորմայից՝ կազմելով նորմայի 40-80%-ը, իսկ Շիրակի, Արարատի, Վայոց ձորի մարզերում եղել է նորմայի սահմաններում (նկ.1.գ):
Նախաձմեռային ժամանակահատվածի ջերմաստիճանների բաշխումն ունեցել է հետևյալ պատկերը.
- *սեպտեմբեր, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին* օդի միջին ամսական ջերմաստիճանները ողջ հանրապետությունում բարձր են եղել նորմաներից, սեպտեմբերին նորմայից բարձր մինչև 1.5 աստիճանով, հոկտեմբերին՝ 1.0-2.5 աստիճանով, նոյեմբերին Տավուշի, Լոռու, Արարատի, Սյունիքի մարզերում և Երևանում նորմայից բարձր է եղել 4.0-5.5 աստիճանով, իսկ մնացած մարզերում 3.0-4.0 աստիճանով (նկ.2.ա-գ):


**Նկ. 1. Ամսական տեղումների քանակը նորմաների համեմատությամբ (%) ըստ մարզերի
ա) 2023թ. սեպտեմբեր, բ) 2023թ. հոկտեմբեր գ) 2023թ. նոյեմբեր ամիսներին**



Նկ.1. ք)




Նկ.1. գ)




**Նկ.2. Օդի միջին ամսական ջերմաստիճանի շեղումը նորմայից ($^{\circ}\text{C}$)
 ա) 2023թ. սեպտեմբեր, բ) 2023թ. հոկտեմբեր, գ) 2023թ. նոյեմբեր ամիսներին**


Նկ.2.ա)




Նկ.2. բ)




Նկ.3. բ)



Նկ.3. գ)



Նկ.3. դ)




Ձմեռային ժամանակահատվածի բոլոր ամիսներին հանրապետության ողջ տարածքում միջին ամսական ջերմաստիճանները բարձր են եղել նորմաներից և ջերմաստիճանի բաշխումն ունեցել է հետևյալ պատկերը.


- *դեկտեմբերին* օդի միջին ամսական ջերմաստիճանը Լոռու, Շիրակի և Սյունիքի մարզերում բարձր է եղել նորմայից 4.5-5.0 աստիճանով, իսկ մնացած մարզերում 3.5-4.5 աստիճանով (նկ.4.ա)
- *հունվարին* նույնպես ամենուր բարձր է եղել նորմայից. Տավուշի, Լոռու, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում 3.0-4.0 աստիճանով, իսկ մնացած մարզերում՝ 4.0-6.0 աստիճանով (նկ.4.բ)
- *փետրվարին* Տավուշի, Լոռու, Գեղարքունիքի, Արագածոտնի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերում բարձր է եղել նորմայից 2.5-4.0 աստիճանով, իսկ մնացած մարզերում՝ 4.0-6.0 աստիճանով (նկ.4.գ)
- *մարտին* շրջանների մեծ մասում օդի միջին ամսական ջերմաստիճանը բարձր է եղել նորմայից 1.5-2.5 աստիճանով, Շիրակի, Գեղարքունիքի, Կոտայքի և Արմավիրի մարզերում՝ 2.5-3.0 աստիճանով (նկ.4.դ):

**Նկ. 4. Օդի միջին ամսական ջերմաստիճանի շեղումը նորմայից (°C)
 ա) 2023թ. դեկտեմբեր, բ) 2024թ. հունվար, գ) 2024թ. փետրվար և դ) 2024թ. մարտ
 ամիսներին**

Նկ.4. ա)



Նկ.4. բ)




Ձնածածկույթ

ՀՀ գետերի գարնանային վարարումների հոսքի ծավալի և առավելագույն ելքի մեծությունը կախված է վարարումներին նախորդած ժամանակահատվածում կուտակված ձյան քանակից, ձնակուտակման պրոցեսի ընթացքից, ինչպես նաև վարարումների ժամանակահատվածում ջերմային և խոնավության պայմաններից:

Ձյան շերտի բարձրության բաշխվածությունը հանրապետության տարածքում, ըստ բարձրության, 2023 թվականի դեկտեմբերի 25-ի, 2024 թվականի հունվարի 28-ի, փետրվարի և մարտի 25-ի դրությամբ տրված է Նկար 5 ա - դ - ում:


2023 թվականի դեկտեմբերի 25-ի դրությամբ հանրապետության տարածքում ձնածածկ առկա է եղել հիմնականում 1500 մ բարձրություններից վերև (նկ.5.ա): Դեկտեմբերի 25-ի դրությամբ ձյան շերտի բարձրությունը Ամասիայում կազմել է 16սմ, Սևանում՝ 15սմ, Հրազդանում՝ 16սմ, Ապարանում՝ 11սմ, Զերմուկում՝ 40սմ, Արագած ք/լ կայանում՝ 72 սմ: Դեկտեմբերի երրորդ տասնօրյակի ձյան շերտի միջին տասնօրյակային բարձրությունը հիմնականում բավական ցածր է եղել նորմայից, բացառությամբ առանձին կայանների, որ գերազանցել է նորման:

Նկ.5.ա) Ձյան շերտի բարձրության բաշխվածությունը, 2023թ. դեկտեմբերի 25




2024 թվականի հունվարի 28-ի դրությամբ հանրապետության գրեթե ողջ տարածքում առկա է եղել ձնածածկույթ, ընդ որում հունվարի 22-27-ը ընկած ժամանակահատվածում դիտված ձյան առատ տեղումներով պայմանավորված՝ ձյան ծածկի բարձրությունը հանրապետության մեծ մասում այդ ժամանակահատվածում աճել է 20-30սմ-ով, Արարատյան դաշտում և նախալեռնային հատվածներում՝ 10-15սմ-ով, իսկ առանձին բարձր լեռնային շրջաններում՝ 50-80սմ-ով: Հունվարի 28-ի դրությամբ ձյան շերտի բարձրությունը Իջևան, Արթիկ, Մասրիկ, Գավառ, Արարատ, Սիսիան օդերևութաբանական կայաններում եղել է 15-25սմ-ի սահմաններում, Ամասիայում կազմել է 16սմ, Հրազդանում, Անանուն լ-ցքում եղել է 45-55սմ սահմաններում, Ջերմուկում կազմել է 98սմ, Ամբերդում՝ 110սմ, Արագած բ/լ կայանում՝ 169 սմ (նկ.5.բ): Հունվարի երրորդ տասնօրյակում Գյումրի, Արթիկ, Ամասիա, Շորժա, Աշտարակ օդերևութաբանական կայաններում դիտված ձյան շերտի բարձրության միջին տասնօրյակային արժեքները կազմել են նորմաների մինչև 60-90%-ը, Արագած բ/լ կայանում՝ 115%-ը Սևան, Մարտունի, Դիլիջան, Օձուն, Արարատ, Գորիս, Սիսիան, Ջերմուկ, Ամբերդ կայաններում՝ 150-280%-ը:

Նկ.5.բ) Ձյան շերտի բարձրության բաշխվածությունը, 2024թ. հունվարի 28



Նկ.5.դ) Ճյան շերտի բարձրության բաշխվածությունը, 2024թ. մարտի 25



2024 թվականի մարտի 25-ի դրությամբ հանրապետության տարածքում ձնածածկ առկա է եղել հիմնականում 1500 մ բարձրություններից վերև (նկ.5.դ): Մարտի 25-ի դրությամբ Գյումրի օդերևութաբանական կայանում ձյան շերտի բարձրությունը կազմել է 5 սմ, Ամասիայում՝ 40սմ, Գավառում՝ 9 սմ, Սևանում՝ 20սմ, Հրազդանում՝ 39սմ, Ապարանում՝ 5սմ, Ջերմուկում՝ 67սմ, Ամբերդում՝ 88սմ, Արագած բ/լ կայանում՝ 208սմ (համեմատության համար նշենք, որ 2023 թվականի նույն օրը Արագած բ/լ կայանում ձյան շերտի բարձրությունը կազմել է 117 սմ): Մարտի երրորդ տասնօրյակում դիտված ձյան շերտի միջին տասնօրյակային բարձրությունները Մարտունի, Հրազդան, Ջերմուկ, Արագած բ/լ կայաններում կազմել են նորմաների՝ 110-125%-ը, Ամբերդ, Անանուն և Գր կայաններում՝ 150-165%-ը, Սևան, Գավառ կայաններում՝ 200-220%-ը:

Այսպիսով, գերավազաններում կուրակված ձյան պաշարները, կախված վարարումների ժամանակահատվածի օդերևութաբանական պայմաններից, վարարումների ժամանակաշրջանում կձևավորեն նորմային մոտ հոսքի ծավալներ:

Վարարումների ժամանակաշրջանի կանխատեսվող հիդրոօդերևութաբանական պայմաններ

Ապրիլին օդի ամսական միջին ջերմաստիճանը կանխատեսվում է նորմայից բարձր 2-3 աստիճանով, տեղումների քանակը նորմային մոտ:

Մայիս և հունիս ամիսներին օդի ամսական միջին ջերմաստիճանները կանխատեսվում է նորմայից բարձր 1 աստիճանով, տեղումների քանակը նորմային մոտ:

Արդյունքում, վարարումների ժամանակաշրջանի կանխատեսվող հիդրոօդերևութաբանական պայմանները վարարումների հոսքի ձևավորման մեջ կունենան նորմային մոտ ազդեցություն:

ԱՄՓՈՓՈՒՄ

1. Հաշվի առնելով դիտված և կանխատեսվող հիդրոօդերևութաբանական պայմանները, կանխատեսվում է, որ գետերում 2024 թվականի գարնանային վարարումների հոսքի ծավալները և առավելագույն ելքերի մեծությունները սպասվում են նորմաների 80-110% սահմաններում (տես հավելվածը):

2. Գետերում ջրի առավելագույն ելքերի անցումները հիմնականում սպասվում են մայիսի երկրորդ և երրորդ տասնօրյակներում:

3. Ջերմաստիճանի կտրուկ բարձրացման և հորդառատ անձրևների դեպքում գետերի մերձափնյա բնակավայրերի ու ցանքատարածությունների համար հնարավոր են ջրածածկումներ և ողողումներ, որոնց վերաբերյալ կանխատեսումներ հնարավոր է կազմել միայն 3-4 օր առաջ, երբ հստակ կանխատեսվում են մոտեցող տաք օդային ալիքներ և ինտենսիվ անձրևներ:

4. Սևանա լիճ

Հիմք ընդունելով եղանակի և Սևանա լիճ մուտք գործող գետային հոսքի կանխատեսումները, լճի մակերևույթից գոլորշացման մեծությունները, Արփա-Սևան ջրատարով Սևանա լիճ տեղափոխվելիք ջրի քանակը (170մլն.խոր.մ) և ոռոգման նպատակով լճից օրենքով սահմանված ջրառը՝ 170մլն.խոր.մ (ընդ որում հաշվարկներում, որպես ջրառի սկիզբ ընդունվել է հունիսի երկրորդ տասնօրյակը),

2024 թվականի հուլիսի 1-ին 2024 թվականի ապրիլի 1-ի մակարդակի համեմատ կանխատեսվում է Սևանա լճի մակարդակի բարձրացում 33-38 սմ-ով (1900.57-1900.62 մ սահմաններում), իսկ 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ լճի մակարդակը կանխատեսվում է 1900.14-1900.20մ սահմաններում, որը 2024 թվականի հունվարի 1-ի մակարդակի համեմատ կլինի -3...+3 սմ սահմաններում (նկ.6):



Նկ.6 Վարարումների ժամանակաշրջանում և տարվա ընթացքում Սևանա լճի մակարդակի փոփոխությունը 2012-2023թթ. ընթացքում, և 2024 թվականի համար կանխատեսումը

5. Ջրամբարներ

«Հայիդրոմետ» ՊՈԱԿ-ի կողմից դիտարկվող 5 խոշոր ջրամբարների 2024 թվականի առավելագույն ջրալցվածությունը կանխատեսվում է.

- ✓ Ախուրյանի ջրամբարում՝ 80-85% (420-450 մլն.մ³),
- ✓ Արփիլիճ ջրամբարում՝ 85-90% (88.0-93.0 մլն.մ³),
- ✓ Ապարանի ջրամբարում՝ 50-55% (45.0-50.0 մլն.մ³),
- ✓ Ազատի ջրամբարում՝ 95-100% (65.0-70.0 մլն.մ³),
- ✓ Մարմարիկի ջրամբարում՝ 95-100% (22.0-24.0 մլն.մ³):

Ուշադրություն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ կանխատեսումները կազմելիս հնարավորինս հաշվի են առնվել գարնանային վարարումների հոսքը ձևավորող գործոնները, և բացի այդ օգտագործվել են կանխատեսված մեծություններ, որոնք ըստ անհրաժեշտության պարբերաբար ենթակա են ճշգրտման, հետևաբար նման դեպքերում կճշգրտվեն նաև թողարկված կանխատեսումները և կտրամադրվի լրացուցիչ տեղեկատվություն:

«Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի

կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն



ԼԵՎՈՆ ԱԶԻԶՅԱՆ

01.04.2024թ.

2024 Թ. ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՎԱՐԱՐՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԻՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

№	ԳԵՏ, ԼԻՃ, ԶՐԱՄԲԱՐ	ԴԻՏԱԿԵՏ	ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ	ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՄԻԱԼԸ	ԲԱԶՄԱՄՅԱ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ		
					ՆՎԱԶ.	ՄԻՋԻՆ	ԱՌԱՎ.
1	2	3	4	5	6	7	8
Գարնանային վարարումների հոսքի ծավալները. (01.04-30.06) մլն խոր.մ							
1	Փամբակ	Շիրակամուր	41.0	11.4	7.52	44.5	87.4
2	Փամբակ	Վանաձոր	85.0	23.5	44.9	102	209
3	Փամբակ	Մեղրուր	120	28.8	52.8	146	275
4	Փամբակ	Թումանյան	165	35.8	64.9	190	313
5	Դեբեդ	Թումանյան	395	98.6	169	449	731
6	Դեբեդ	Ախթալա	450	111	204	532	854
7	Դեբեդ	Այրում	530	118	178	573	947
8	Լեռնաջուր	Լեռնապար	23.0	6.17	11.4	27.0	55.4
9	Տանձուր	Վանաձոր	37.0	9.60	11.0	42.3	77.6
10	Ալարեքս	Դեբեդ	25.0	5.85	10.6	30.6	58.6
11	Ձորագետ	Կաթնառար	43.0	7.65	27.3	47.4	72.7
12	Ձորագետ	Սյրեփանավան	170	35.0	71.8	195	324
13	Ձորագետ	Գարգառ	230	44.6	87.3	245	438
14	Տաշիր	Սարապովկա	50.0	13.1	14.7	46.9	91.0
15	Գարգառ	Կուրթան	20.0	5.29	4.61	23.1	42.4
16	Մարցիգետ	Թումանյան	38.5	10.5	10.3	46.6	98.9
17	Աղսյուն	Ֆիոլետովո	14.0	4.26	6.98	21.1	50.5
18	Աղսյուն	Դիլիջան	57.0	13.6	16.2	56.4	148
19	Աղսյուն	Իջևան	170	44.6	44.2	183	405
20	Բլրկանգետ	Դիլիջան	12.5	3.53	3.74	15.1	26.0
21	Շամլուղ	Դիլիջան	7.50	2.64	3.09	9.22	22.6
22	Գեյրիկ	Գոշ	75.0	17.1	14.4	70.1	157
23	Գեյրիկ	Ճամբարակ	13.0	4.03	3.47	15.7	30.6
24	Պաղջուր	Գեյրահովիտ	15.0	9.90	3.42	33.3	60.9
25	Ոսկեպար	Ոսկեպար	9.70	8.46	2.70	22.6	55.4
26	Կիրանց	Աճարկուր	10.0	5.24	1.40	18.5	36.7
27	Հախում	Ծաղկավան	21.0	6.27	4.89	26.7	45.2
28	Տավուշ	Բերդ	6.50	5.08	1.55	13.3	34.2
29	Հախինջա	Ալգեձոր	22.0	15.1	9.40	55.0	104
30	Նայրիգետ	Գանձաքար	7.50	3.46	2.27	12.0	23.5
31	Ախուրյան	Ամասիա	75.0	25.5	35.3	89.6	193
32	Ախուրյան	Ախուրիկ	77.0	23.4	40.1	91.0	181
33	Ձորագետ	Ձորակերտ	4.00	1.41	1.75	5.68	16.3
34	Աշոցք	Կրասար	32.0	6.36	23.6	42.9	70.1
35	Կարկաչան	Ղարիբջանյան	9.00	3.56	3.38	12.1	23.6
36	Քասախ	Վարդենիս	18.0	11.2	5.68	25.8	66.8
37	Քասախ	Աշտարակ	30.0	12.4	11.5	37.4	106
38	Թթուջուր	Թթուջուր	13.0	5.74	3.10	17.9	32.1
39	Եղիպարրուշ	Եղիպարրուշ	3.40	1.17	1.45	4.04	9.50
40*	Գեղարուր	Արագած	19.0	4.18	6.70	22.3	36.2
41	Շաղվարդ	Փարբի	4.60	1.50	2.55	5.60	14.2
42	Ամբերդ	Ագարակ	7.50	4.00	0.30	8.78	29.6
43	Հրազդան	Հրազդան	125	37.1	57.0	166	320
44	Հրազդան	Արգել	45.0	16.0	27.1	54.6	108
45	Հրազդան	Երևան	97.0	42.0	27.0	116	234
46	Մարմարիկ	Հանքավան	41.0	8.80	9.53	39.1	68.6
47	Մարմարիկ	Աղավնաձոր	98.0	27.3	34.0	114	284
48	Ծաղկամարգ	Արտավազ	17.0	4.68	7.44	21.0	36.2
49	Գոմուր	Մեղրաձոր	33.0	11.6	10.9	39.6	97.6
50	Դալար	Արգաքան	15.0	6.00	5.42	19.3	44.5
51	Արաիգետ	Արագյուղ	5.90	4.45	1.00	7.60	32.5
52	Ագար	Գառնի	70.0	16.0	36.3	77.2	155

1	2	3	4	5	6	7	8
53	Վեղի	Ուրցածոր	37.0	10.8	12.8	40.4	76.0
54	Արփա	Ջերմուկ	87.0	16.4	46.2	97.4	166
55	Արփա	Եղեգնածոր	130	51.7	27.0	145	352
56	Արփա	Արենի	270	90.2	51.0	250	612
57	Վալք	Ջառիթափ	8.00	2.87	1.96	10.0	21.3
58	Գյածոր	Վերնաշեն	2.90	1.18	0.35	3.32	8.97
59	Եղեգիս	Հերմոն	75.0	20.6	19.0	78.9	178
60	Եղեգիս	Շարին	103	36.2	34.4	118	255
61	Արտաբուն	Արտաբույնք	12.0	4.11	3.93	15.3	29.9
62	Սելիմագետ	Շարին	28.0	10.9	5.84	33.4	86.2
63**	Մեղրիգետ	Լիճք	12.0	2.58	8.10	15.5	25.5
64	Մեղրիգետ	Մեղրի	48.0	19.1	18.3	56.5	115
65	Ողջի	Քաջարան	51.0	10.1	27.9	62.3	102
66	Ողջի	Կապան	200	44.4	41.0	196	384
67	Որոտան	Գորայք	54.0	15.3	28.9	63.7	113
68	Ծղուկ	Ծղուկ	37.0	11.4	15.8	36.7	88.4
69	Գորիագետ	Գորիս	3.90	2.00	1.99	4.69	12.4
70	Գեղի	Գեղի	82.0	15.1	35.9	80.9	134

* տրված է ապրիլ-օգոստոս ամիսների հոսքի կանխապեստումը և բնույթագրերը

** տրված է ապրիլ-հուլիս ամիսների հոսքի կանխապեստումը և բնույթագրերը

Սևանա լիճ թափվող գետեր							
71	Ձկնագետ	Ծովագյուղ	20.0	6.67	8.10	26.2	54.3
72	Դրախտիկ	Դրախտիկ	3.20	1.35	0.32	4.05	8.72
73	Փամբակ	Փամբակ	2.70	1.20	1.29	3.84	10.1
74	Մասրիկ	Ծովակ	31.0	6.31	17.8	37.2	70.9
75	Կարճաղբյուր	Կարճաղբյուր	8.00	2.88	2.81	11.0	23.2
76	Արծվանիստ	Արծվանիստ	4.80	2.63	1.20	5.70	18.0
77	Վարդենիս	Վարդենիկ	27.0	7.03	17.9	33.6	55.4
78	Մարտունի	Գեղհովիտ	27.0	7.31	16.3	32.4	64.5
79	Արգիճի	Վերին Գեղաշեն	110	27.3	54.3	122	291
80	Ծաղկաշեն	Վաղաշեն	26.0	5.66	15.7	31.6	48.4
81	Բախտրակ	Ծակքար	14.0	4.81	1.16	16.2	32.9
82	Շողվակ	Ձորագյուղ	8.00	2.70	3.35	9.23	19.9
83	Գավառագետ	Նորապոս	37.0	6.00	25.0	41.8	73.0

Առավելագույն ելքերի մեծությունները. մ ³ /վրկ							
1	Փամբակ	Շիրակամուտ	12.0	5.90	5.50	19.5	45.6
2	Փամբակ	Վանածոր	35.0	10.2	13.2	33.8	83.5
3	Փամբակ	Մեղրուտ	35.0	14.0	16.2	52.9	109
4	Փամբակ	Թումանյան	80.0	21.6	25.6	79.1	171
5	Դեբեդ	Թումանյան	180	51.3	66.0	203	477
6	Դեբեդ	Ախթալա	210	55.2	71.5	257	760
7	Դեբեդ	Այրում	260	80.0	50.6	245	759
8	Լեռնաջուր	Լեռնապատ	6.00	2.52	3.90	9.90	24.3
9	Տանձուտ	Վանածոր	12.0	5.02	3.20	19.3	65.6
10	Ալարեքս	Դեբեդ	13.0	11.5	2.30	21.1	80.9
11	Ձորագետ	Կաթնառատ	14.0	6.63	9.60	22.3	52.4
12	Ձորագետ	Սրեպիանավան	60.0	31.0	32.7	92.9	249
13	Ձորագետ	Գարգառ	90.0	43.7	23.1	125	359
14	Տաշիր	Սարապովկա	20.0	18.0	4.70	33.0	122
15	Գարգառ	Կուրթան	9.00	7.77	3.90	13.9	76.0
16	Մարցիգետ	Թումանյան	21.0	10.4	4.30	30.3	93.0
17	Աղստև	Ֆիդլերովո	8.00	3.90	1.60	9.50	26.1
18	Աղստև	Դիլիջան	25.0	6.59	4.90	24.4	53.1
19	Աղստև	Իջևան	85.0	21.2	16.6	75.6	182
20	Բլլղանագետ	Դիլիջան	7.00	2.40	1.48	8.14	16.2
21	Շամլուղ	Դիլիջան	3.80	1.30	0.98	4.31	10.5
22	Գեղիկ	Գոշ	20.0	12.0	5.20	35.9	74.5
23	Գեղիկ	Ճամբարակ	6.00	4.25	2.10	10.4	32.4

1	2	3	4	5	6	7	8
24	Պաշտոն	Գեղահովիտ	17.0	11.1	1.50	29.9	83.8
25	Ոսկեպար	Ոսկեպար	12.0	7.30	1.80	19.7	45.8
26	Կիրանց	Աճարկուտ	9.00	3.85	1.50	10.9	29.1
27	Հախում	Ծաղկավան	9.00	5.81	2.90	16.6	44.3
28	Տավուշ	Քերդ	7.00	5.56	1.60	11.2	35.4
29	Հախինջա	Այգեձոր	27.0	13.1	3.10	38.4	89.0
30	Նալրիգետ	Գանձաքար	5.00	3.67	1.10	7.50	24.8
31	Ախուրյան	Ամասիա	15.0	7.99	11.0	30.4	58.0
32	Ախուրյան	Ախուրիկ	40.0	21.9	15.8	60.7	182
33	Քասախ	Վարդենիս	15.0	16.6	2.90	23.2	151
34	Քասախ	Աշտարակ	30.0	19.0	7.20	50.6	130
35	Հրազդան	Հրազդան	45.0	20.6	16.5	62.8	144
36	Հրազդան	Արգել	15.0	11.0	5.60	27.7	82.1
37	Հրազդան	Երևան	35.0	30.4	22.0	59.0	174
38	Մարմարիկ	Հանքավան	13.0	3.88	3.40	16.5	33.4
39	Մարմարիկ	Աղավնաձոր	25.0	12.4	10.0	40.0	86.7
40	Գոմոր	Մեղրաձոր	11.0	5.40	2.40	15.4	50.6
41	Ազար	Գառնի	25.0	11.2	11.8	32.5	83.9
42	Վեդի	Ուրցաձոր	13.0	5.91	5.50	17.0	45.9
43	Արփա	Ջերմուկ	30.0	11.2	18.4	49.4	91.0
44	Արփա	Եղեգնաձոր	43.0	21.0	26.5	65.6	119
45	Արփա	Արենի	100	37.0	31.6	111	199
46	Եղեգիս	Հերմոն	21.0	7.40	10.1	27.5	48.6
47	Եղեգիս	Շապին	35.0	14.7	17.8	47.6	207
48	Արփարուն	Արփարույնք	4.50	2.00	1.28	6.14	16.9
49	Սեյմազետ	Շապին	11.0	7.58	1.60	15.9	72.4
50	Մեղրիգետ	Լիճք	3.50	0.81	1.61	4.14	7.35
51	Մեղրիգետ	Մեղրի	13.0	8.33	5.40	17.5	87.5
52	Ողջի	Քաջարան	9.00	4.22	8.70	18.3	43.9
53	Ողջի	Կապան	30.0	15.4	11.4	55.9	133
54	Ծղուկ	Ծղուկ	9.00	6.12	5.50	15.0	39.0
55	Գեղի	Գեղի	11.0	5.47	9.00	24.0	44.0

Սևանա լիճ թափվող գետեր							
56	Ձկնագետ	Ծովագյուղ	15.0	4.27	3.38	14.0	46.4
57	Դրախտիկ	Դրախտիկ	2.50	1.00	0.32	4.05	6.11
58	Փամբակ	Փամբակ	1.00	0.70	0.40	1.53	6.53
59	Մարիկ	Ծովակ	9.00	2.80	2.91	9.73	21.5
60	Կարճաղբյուր	Կարճաղբյուր	2.00	0.90	0.55	2.80	15.4
61	Արծվանիս	Արծվանիս	3.00	1.00	0.86	3.12	15.3
62	Վարդենիս	Վարդենիկ	10.0	3.64	2.42	13.2	30.6
63	Մարտունի	Գեղհովիտ	10.0	3.43	5.80	13.6	26.7
64	Արգիճի	Վերին Գեղաշեն	50.0	25.3	16.3	50.7	265
65	Ծաղկաշեն	Վաղաշեն	7.00	2.16	4.70	9.98	17.9
66	Բախտակ	Ծակքար	7.00	3.91	0.26	12.1	31.5
67	Շողվակ	Ձորագյուղ	4.00	1.50	1.22	4.86	18.2
68	Գավառագետ	Նորաբոս	15.0	6.52	5.64	16.6	72.5

**Վեգետացիոն ժամանակաշրջանի (01.04-30.09) միջին ելքերի մեծությունների
կանխատեսում, մ³/վրկ**

1	2	3	4	5	6	7	8
1	Փամբակ	Շիրակամուտ	3.00	0.88	1.54	3.42	6.86
2	Փամբակ	Վանաձոր	6.80	1.78	4.38	8.19	16.0
3	Փամբակ	Մեղրուտ	9.60	2.19	4.43	11.7	20.8
4	Փամբակ	Թումանյան	13.0	1.92	5.80	16.1	27.0
5	Դերեդ	Ախթալա	35.0	9.30	20.7	45.6	80.4
6	Դերեդ	Այրում	40.0	10.4	17.7	47.9	92.2
7	Լեռնաջուր	Լեռնապար	1.80	0.40	0.98	2.17	5.27
8	Ալարեքս	Դերեդ	2.10	0.60	1.16	2.60	5.47
9	Ձորագետ	Կաթնառատ	3.80	0.70	2.51	4.20	7.02
10	Ձորագետ	Սյրեփանավան	14.0	3.00	7.10	17.0	30.3
11	Ձորագետ	Գարգառ	18.0	4.36	8.90	21.8	38.4
12	Տաշիր	Սարալուովկա	3.80	1.10	1.57	4.09	9.10
13	Գարգառ	Կուրթան	1.60	0.43	0.70	1.91	3.69
14	Մարցիկետ	Թումանյան	3.30	0.97	1.03	3.95	7.25
15	Աղսրև	Ֆիդլեփովո	1.20	0.38	0.72	1.81	3.68
16	Աղսրև	Դիլիջան	4.50	1.09	1.41	4.67	10.9
17	Աղսրև	Իջևան	12.0	3.40	3.70	14.7	34.0
18	Գեղիկ	Գոշ	4.30	1.38	1.20	5.53	13.2
19	Պաղջուր	Գեղահովիտ	1.30	0.86	0.40	2.96	6.12
20	Ոսկեպար	Ոսկեպար	0.80	0.61	0.31	1.81	4.86
21	Կիրանց	Աճարկուտ	0.90	0.46	0.14	1.56	2.99
22	Հախում	Ծաղկավան	1.70	0.57	0.49	2.20	4.71
23	Տավուշ	Բերդ	0.50	0.48	0.16	1.08	3.88
24	Հախինջա	Այգեձոր	1.80	1.28	0.84	4.53	10.2
25	Ախուրյան	Ախուրիկ	7.50	2.02	4.50	8.50	16.5
26	Քասախ	Վարդենիս	1.30	0.82	0.41	1.89	4.86
27	Քասախ	Աշտարակ	3.30	1.27	1.40	4.00	11.1
28	Հրազդան	Հրազդան	9.70	2.65	5.31	12.1	23.2
29	Հրազդան	Արգել	4.50	1.02	3.08	5.09	8.81
30	Մարմարիկ	Հանքավան	2.50	0.56	0.93	2.90	5.35
31	Մարմարիկ	Աղավնաձոր	7.00	2.27	4.20	8.19	19.5
32	Դալար	Արգաքան	1.10	0.43	0.38	1.39	3.55
33	Ագապ	Գառնի	5.00	1.30	2.99	6.43	10.8
34	Վեդի	Ուրգաձոր	2.20	0.75	0.38	2.38	5.43
35	Արփա	Ջերմուկ	7.00	1.25	3.90	8.03	13.5
36	Արփա	Եղեգնաձոր	13.0	3.65	2.69	14.7	36.0
37	Արփա	Արենի	18.0	5.71	4.07	20.3	42.9
38	Վալք	Չառիթափ	0.50	0.19	0.15	0.68	1.46
39	Գլաձոր	Վերնաշեն	0.20	0.088	0.033	0.22	0.63
40	Եղեգիս	Հերմոն	5.70	1.51	2.10	6.43	13.0
41	Եղեգիս	Շափին	9.30	2.63	2.90	10.7	19.6
42	Արտաբուն	Արտաբույնք	0.90	0.32	0.32	1.19	2.47
43	Սեյիմագետ	Շափին	2.00	0.70	0.47	2.41	5.79
44	Մեղրիկետ	Լիճք	0.90	0.19	0.53	1.11	1.76
45	Մեղրիկետ	Մեղրի	3.90	1.21	1.39	4.64	9.58
46	Ողջի	Քաջարան	4.80	1.16	2.20	5.90	9.08
47	Ողջի	Կապան	16.0	3.84	3.17	18.4	32.1
48	Գեղի	Գեղի	5.50	1.59	3.16	7.18	10.8
49	Որոտան	Գորայք	4.70	0.99	2.93	5.60	9.06
50	Ծղուկ	Ծղուկ	1.80	0.79	1.03	2.28	4.74
Սևանա լիճ թափվող գետեր							
51	Ձկնագետ	Ծովագյուղ	0.80	0.60	0.60	1.83	3.70
52	Դրախտիկ	Դրախտիկ	0.20	0.10	0.030	0.29	0.61
53	Փամբակ	Փամբակ	0.25	0.14	0.12	0.33	0.73
54	Մասրիկ	Ծովակ	3.20	0.48	2.12	3.74	5.99

1	2	3	4	5	6	7	8
55	Կարճադրյուր	Կարճադրյուր	0.80	0.22	0.41	1.07	1.99
56	Արծվանիսպ	Արծվանիսպ	0.30	0.17	0.10	0.41	1.24
57	Վարդենիս	Վարդենիկ	1.80	0.60	0.61	2.47	5.20
58	Մարտունի	Գեղիովիպ	2.20	0.65	1.29	2.67	5.58
59	Արգիճի	Վերին Գեղաշեն	7.50	1.89	4.10	8.56	19.9
60	Ծաղկաշեն	Վաղաշեն	1.00	0.44	1.10	2.32	3.54
61	Բախտակ	Ծակքար	0.95	0.33	0.12	1.09	2.24
62	Շողակ	Ձորագյուղ	0.30	0.18	0.25	0.66	1.32
63	Գավառագետ	Նորապուս	3.00	0.48	2.95	3.94	6.61

ՋՐԵՐԻ ՄՈՒՏՔԸ ՋՐԱՄԲԱՐՆԵՐ ԵՎ ԼՃԵՐ՝ ԳԵՏԵՐՈՎ

1	2	3	4	5	6	7	8
(01.04-30.06) մլն. խոր.մ							
1	Սևանա լիճ		390	68.2	209	410	676
2	Արփի լճի ջրմբ.		45.0	9.57	32.6	63.0	109
3	Ախուրյանի ջրմբ.		405	118	191	492	971
4	Ապարանի ջրմբ.		40.0	16.0	25.0	57.0	133
5	Ազատի ջրմբ.		80.0	18.4	36.9	87.0	161
6	Կեչուտի ջրմբ		125	25.2	73.5	149	258
7	Սպանդարյանի ջրմբ.		110	25.0	60.0	130	210
8	Ջողագի ջրմբ.		75.0	24.7	7.70	77.8	157
9	Գեղի ջրմբ.		95.0	23.9	51.7	119	227
10	Հախումի ջրմբ		28.0	7.85	6.12	32.6	56.5
11	Տավուշի ջրմբ		10.0	5.46	1.71	13.7	37.5

(01.04-30.09) մ³/վրկ							
1	Սևանա լիճ		30.0	5.10	18.3	34.0	54.2
2	Ախուրյանի ջրմբ.		34.0	8.56	17.4	39.8	78.0
3	Ապարանի ջրմբ.		3.50	1.18	1.35	4.44	8.18

Տնօրենի տեղակալ՝  Էդգար Միսակյան

Հիդրոլոգիայի ծառայության պետ՝  Ամալյա Միսակյան

Հիդրոլոգիական կանխատեսումների բաժնի պետ՝  Լուսինե Շաքարյան

Թողարկվել է 01.04.2024թ.